ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

Պետական աջակցության տրամադրման նպատակով սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձանց ընտրության համար 2020 թվականի դեկտեմբերի 15-ի N 209-Ա/1 հրամանով հաստատված մրցութային հանձնաժողովի գնահատման նիստի

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ք. Երևան, Կառավարական տուն 3, 334 սենյակ

25.08.2021թ. ժամը 11:00

Նիստին ներկա էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ***Տաթևիկ Ստեփանյան***
/նախարարի տեղակալ/

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մուրադյան	Ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության պետ
Ք. Հովհաննիսյան	Հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ
Ա. Մկրտչյան	Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության՝ բյուջետավորման բաժնի պետ
Ա. Հարությունյան	Ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի պետ
Դ. Դադալյան	Հրավիրված փորձագետ

Հանձնաժողովի քարտուղար՝ Սուսաննա Ավետիսյան
/գնումների համակարգման բաժնի մեթոդիստ/

Օրակարգ

1. Հայտերի գնահատում

Պետական աջակցության տրամադրման նպատակով սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձանց ընտրության համար մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գնահատման նիստը կայացավ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով 2020 թվականի դեկտեմբերի 14-ի N 208-Ա/1 հրամանով և հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Նիստը վարեց հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը:

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման, 28-րդ կետի համաձայն ***հանձնաժողովի նիստը դռնփակ էր***:

Հայտերի գնահատման նիստում՝ նախագահը նիստը հայտարարեց բացված, ներկայացրեց նիստի օրակարգը և հանձնաժողովի անդամների կողմից սկսվեց բովանդակային ուսումնասիրությունը և հայտերի գնահատումը:

Գնահատող հանձնաժողովի անդամները մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատումն իրականացրեցին ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման 30.1-րդ կետով հաստատված չափանիշների հիման վրա.

N	Չափանիշ	Միավոր	Պարզաբանում
1	Ներկայացված ծրագիրը հիմնավորված է, համապատասխանում է սահմանված նպատակներին և առաջնահերթություններին.		
2	Ծրագրի խնդիրները հասանելի, չափելի ու իրատեսական են և համապատասխանում են դրված նպատակներին, ծրագրի պլանավորումն իրատեսական է և հնարավոր է դարձնում դրված խնդիրների իրականացումը.		
3	Նախանշված է ծրագրի ազդեցությունը, իրատեսական շարունակելիության ձևը և (կամ) կայունության ապահովման մեխանիզմները.		
4	Ապահովված են ծրագրի առավելագույն տեսանելիության և արդյունքների տարածման մեխանիզմները.		
5	Ծրագիրը համահունչ է մասնակցի կանոնադրական նպատակներին և խնդիրներին.		
6	Ծրագրում ներգրավվող աշխատանքային ռեսուրսների մասնագիտական փորձառությունը բավարար է ծրագրի նպատակները և խնդիրներն իրականացնելու համար:		

Գնահատման սկզբունքները. Առաջարկները գնահատվում են 1-10 բալային սանդղակով և գնահատականի համար տրվում է համառոտ պարզաբանում.

1-3 միավոր – Վատ. Չի համապատասխանում առաջադրված պահանջներին
4-6 միավոր – Ընդունելի. Ընդհանուր առմամբ համապատասխանում է առաջադրված պահանջներին, կան որոշ վերապահումներ
7-10 միավոր – Շատ լավ. Հիմնականում կամ ամբողջությամբ համապատասխանում է առաջադրված պահանջներին:

«Սոցիալական շտապօգնություն»

N	Լոտ	Կազմակերպության անվանում	Պարզաբանում
1	Լոտ 1	Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ	Կազմակերպության կողմից ներկայացված հայտի բովանդակային ուսումնասիրության ժամանակ հանձնաժողովի անդամները հայտնաբերեցին հետևյալ անհամապատասխանությունները. 1. Ձև N2 ծրագրային առաջարկում կազմակերպությունը նշել է, որ՝ ✓ կազմակերպելու է առավելագույնը 3 ակցիա այն դեպքում, երբ հրավերով պահանջվում է առնվազն 3 ակցիաների կազմակերպում, ✓ համագործակցելու է առավելագույնը 3 առևտրային կազմակերպությունների (բարերարների) հետ այն դեպքում, երբ հրավերով պահանջվում է առնվազն 3 առևտրային կազմակերպությունների (բարերարների) հետ հուշագրի կամ համաձայնագրի առկայություն: 2. Կազմակերպության կողմից ներկայացված երաշխիքային նամակը տրված է իր իսկ հայտատուի՝ «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ-ի նախագահի կողմից, սակայն երաշխիքային նամակը պետք է տրամադրի այն կազմակերպությունը, որը երաշխավորում է ծրագրի իրականացման համար տրամադրել 3.920.000 ՀՀ դրամ:

«Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության կողմից ներկայացված հայտը մերժվեց, քանի որ չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անցկացվող մրցույթի արդյունքում կազմվող՝

գնահատող հանձնաժողովի անդամների կողմից գնահատման թերթիկներում համապատասխան նշումներ կատարելու միջոցով մրցութային առաջարկների վերաբերյալ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սույն եզրակացությունը ներառում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման նպատակով անկացվող մրցույթի գնահատման արդյունքում բոլոր մասնակիցների ստացած միավորները:

Ծրագրի անվանում	Կազմակերպության անվանում	Միավորների հանրագումարը
«Սոցիալական շտապօգնություն»	Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ	70

Հանձնաժողովը որոշեց.

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստ հրավիրել 26.08.2021 թվականին, ժամը 11:00-ին:

Հանձնաժողովի նախագահ՝ ..... Տ. Ստեփանյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Մուրադյան .....

Ք. Հովհաննիսյան .....

Ա. Մկրտչյան .....

Դ. Դադալյան .....

Հանձնաժողովի քարտուղար՝ ..... Ս. Ավետիսյան

25.08.2021թ.